ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂՈՒ ՍԿԻԶԲԸ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Բանասիր. գիտ. դոկտոր Գ. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ավետիք Իսահակյանի անունը գրական աշխարհում առաջին անգամ հնչեց 1892-ին, երբ «Տարազում» տպագրվեց նրա «Ծաղիկ էի նորաբողբոջ» ոտանավորը։ Այնուհետև նրա բանաստեղծությունները հաճախակի երևում են «Արաքսի», «Մուրճի», նույն «Տարազի» էջերում։

Երիտասարդ բանաստեղծի շեշտված անհատականությունը նոր բնագծեր էր բացում հայ պոեզիայում։ Եվ երբ 1897 թ. հրապարակվում է նրա բանաստեղծությունների առաջին գիրքը՝ «Երգեր ու վերքեր» խորագրով, ժամանակի մամուլն անմիջապես արձանագրում է, թե Իսահակյանը բերում է գեղարվեստական նոր աշխարհ, որտեղ ինքը «լիազոր տեր է, մրցակից չունի»[1]։

Այս կարծիքը շուտով գրեթե համընդհանուր դարձավ ժամանակի գրական միջավայրում։ Սակայն քննադատությունը երկար տարիներ չկարողացավ բացատրել, թե որն է այդ «նոր աշխարհի» ներքին իմաստն ու էությունը։

Գրական-հասարակական կարծիքը ընտելացել էր պոեզիայի որոշ ավանդական ըմբռնումների։ Եթե քաղաքացիական բանաստեղծություն է՝ ապա չափանիշը Պատկանյանն է, եթե քնարական է՝ ապա Հովհաննիսյանը։ Դրվատելով ու մեծարելով Իսահակյանին, «Երգեր ու վերքերը» այնուամենայնիվ գնահատվում էր հին պատկերացումներով։ Իսահակյանին վերագրվում էր կա՛մ իրականության գերազանցապես հուզական զգացողություն, կա՛մ էլ վերացականություն ու հայեցողություն։

«Երգեր ու վերքեր» ժողովածուն խոր տեղաշարժեր առաջ բերեց հայրենական պոեզիայում։ Իսահակյանի բանաստեղծական խոսքի նշանակությունը շատ ավելին էր, քան «նոր ոճն ու գրելաձևը»։

Կյանքի սոցիալական, հասարակական անդրադարձումները և անհատի հոգևոր մղումները Իսահակյանը գեղարվեստորեն հայտնաբերում էր ու իմաստավորում պատկերային միասնական հանգույցներում։ Նա արմատավորում էր բանաստեղծական սինթետիկ մի արվեստ, որ խտացնում էր երևույթների բազմակողմանի լինելիությունը, մերձեցնում դրանք հարաբերումների հատման կետերում և անցումներում։ Հույզին, զգացմունքին միախառնվում էր փիլիսոփայական խորը, քնարականը հագենում էր էպիկական երակով։

Մաքուր, թորած սիրո, կարոտի կամ քաղաքացիական մոտիվների միալար ու միագիծ մեղեդիները՝ «Երգեր ու վերքերից» սկսած նահանջում են նրա ստեղծագործության մեջ։ Հարուստ ու տարբեր, երբեմն անմիասեռ տրամադրությունների ներթափանցումները, զուգորդություններն ու հակադրություն-

---

[1] «Մուրճ», 1898, № 6։

ներր տանում են դեպի կյանքի համակողմանի ընդգրկում, բերում կյանքի ու աշխարհի, մարդկային հոգեբանության ու ճակատագրի վերարտադրության լայնք ու խորք։

Առաջին իսկ բանաստեղծություններից Իսահակյանը երբեք չի պարփակում իրեն՝ տվյալ հույզի կամ տրամադրության շրջանակներում։

«Ծաղիկ էի նորաբողբոջ» (1892) բանաստեղծության մեջ, օրինակ, համադրվում են և՛ սիրո երջանկությունը, և՛ ողբերգությունը, տրամադրությունների այնպիսի դրամատիկ խաչավորումով, որտեղ միաժամանակ հընչեցվում են ոչ միասեռ այնպիսի հույզեր, որպիսիք սիրո հեքիաթային պատանեկական վայելքն է և դրա հակոտնյան՝ մերժվածության ու ցավի ծանր դրաման։ Ընդամենը չորս քառատողից բաղկացած մի բանաստեղծության մեջ Իսահակյանը վերցնում է սիրո ղղացմունքի ահա այսպիսի լայնք, իմաստավորում այն ապրումի միմյանցից հեռու տարբերակներով։

Կամ «Ցաված սիրտրս երգեր հյուսեց» (1891) բանաստեղծության մեջ բացահայտվում է սեփական երգի էությունը, սակայն ոչ միայն ստեղծման պահի «անուշ ու տխուր» մորմոքով, այլև բանաստեղծի մահից հետո սպասվող հեռավոր իմաստով։

Հենց սկզբից Իսահակյանը ընդարձակում էր մարդկային հուզապրումի կամ հոգեբանության ընդգրկման տարողությունը, հենց սկզբից մասնավորն ու կոնկրետը բանաստեղծորեն վերացարկվում էր հուզական-խոհական բաղմապիսի իմաստներով։

Վերցնենք արդեն իսկ «Երգեր ու վերքերում» դծագրվող մոր կերպարը։ Ժողովրդական երգի ոգով գրված հայտնի «Մայրիկիս» (1893) բանաստեղծության մեջ մոր կերպարը միահյուսվում է հայրենիքին, նրա շնչին ու կանչերին, քնարական անհատի մոր կարոտը՝ հայրենի սարերի, հավքերի ու հովերի կարոտներին.

... Սարեն կուգամ. ճիչուն հավքե՛ր,
Ա՜խ, իմ մորս տեսել չե՞ք.
Հովեն կուգամ, մարմանդ հովե՛ր,
Ախոր բարև բերել չե՞ք։

Հավք ու հովեր եկան կրչտիս,
Անձնեն դիպան ու անցան.
Պապակ-սրտիս, վարդագ-սրտիս
Անխոս դիպան ու անցա՜ն։

Ա՜խ, ո՛ տեսնին, անուշ լեզվին
Կարոտցել եմ, մայրի՛կ ջան.
Երնե՜կ, երնե՜կ. երազ լինիմ,
Թրոնիմ մոտդ, մայրի՛կ ջան։

Այստեղից սկսած ձևավորվում, հետագայում քնարականորեն վերհանում և խոհականորեն խորանում է իսահակյանական մոր կերպարը, դառնում այն, ինչ դիպուկ նկատել է բանաստեղծի բարեկամներից Սիմոն Զիկովանին. «Իսահակյանի մոր կերպա՜րը... ինձ համար դժվար է մատնացույց անել մոր մի ուրիշ կերպար, որը տոգորված լինի որդիական այդպիսի քնքշությամբ և հայրենասիրական խանդավառությամբ, մոր կերպարը, որը՝ դրա հետ միասին դառնա հայրենիքի դեմքի արտացոլումը, նրա բանաստեղծական անկրկնելի այլակերպությունը»[2]։

Իսահակյանի մոր կերպարը մեկ ձգվում, իր մեջ է առնում հայրենիքը՝ նրա շնչով, ոգով ու առաքինություններով, խոյանում իբրև մի ամբողջ ժողովրդի տոկունության սիմվոլ, մեկ էլ խորհրդանշում է մայրական սիրո ու

2 «Ավ. Իսահակյանի մասին», Երևան, 1971, էջ 15։

զորովանքի արժանի տառապող մարդկություն, ապա դառնում է մարդկայնության կիզակետ, հավերժական անանձնական սիրո սկիզբ ու բարձրակետ։ Նրա բանաստեղծություններում հյուսվում է հայոց հինավուրց հողի մեղմ ճրագների նման աննշմարելի մայրերի աղոթքն ու մաղթանքը՝ միախառնվելու բարու և մարդկայնության անեղծ նշանաբանով առաջ շարժվող մարդկային սերունդների համառ երթին։ Եվ դժվար է որոշել, թե որտեղ է վերջանում մեկը, սկսում մյուսը, որքան միասնական է քնարական-խոհական շաղախը, այնքան և ամբողջական է աշխարհի հեռու ու մոտիկ որդիների կարոտը բորբոքող իսահակյանական մոր կերպարը, օժտված՝ այդ որդիների տառապանքների ու ցավերի մայրական բեռով ու անքեն հոգով, իր հարազատ որդուն արժանի նկարագրով, մղումներով ու ձգտումներով։

Այսպես՝ իր պոեզիայի անգամ ամենից «անձնական» մոտիվներով ու տրամադրություններով բանաստեղծը ծավալում, ընդարձակում էր հայրենիքի, սիրո ու մարդկայնության բանաստեղծական իդեալները, ընդլայնում դրանց հասարակական տարողությունն ու հնչեղությունը։

Պատանեկան սիրո անաղարտ թրթիռ՝ թեավորող, նույնչափ և նեղացկոտ ու խռովկան, ուխտին անդավաճան մնալու երդումներ—«երդեր ու վերքերով» այսպես սկսեց իր սիրերգությունը Իսահակյանը, անկեղծ, առանց կեցվածքի ինչպես բարձրաձայն, այնպես էլ ժողովրդական շնչով գրված երգերում.

Օխտը սարով ճեռո՞ւ ինձնից,
Քու շվամով ապրում եմ, յա՛ր.
Օխտը տարով բաժան ինձնից,
Քու կարոտով էրվում եմ, յա՛ր։

Դարդիս դարման, յարիս մահիլամ.
Կյանք ու արև յարս ու՞ր է։

(1892)

Ապա սիրո երիտասարդական պոռթկացող դրամա՝ սոցիալական անարդարության հոգեբանությամբ, հայնեական նախատալից ծառացում ու խանդ, համակերպվելու խռովք։ Այնուհետև նոր գայթակղություններ մեծ աշխարհի ճանապարհներին՝ նոր սեր ու հին մորմոք, կամ այրական սիրո ուժ ու ներողամտություն, հախուռն ու վայելուչ խոնարհում մարդուն երջանկություն պարգևող սիրո հզորության առջև, սիրո զորության խոհական-փիլիսոփայական իմաստավորում։

Այսքան մեծ է Իսահակյանի սիրերգության շրջագիծը, որը հենց վաղ շրջանի ստեղծագործություններում առանձնանում է բազմազան մտահղացումներով ու արտահայտչականությամբ։

Նրա վաղ ոտանավորների անկեղծ զրույց-խոստովանություններին հաջորդում են սիրո ժողովրդական դրսևորման շեշտերը։ Ժամանակի նյութապաշտության ու գործարարության թոհուբոհում անափ խանդաղատանքով են հնչում բոլորովին այլ հոգսերով ապրող ժողովրդի մարդկանց մտահոգությունները.

Մանկալ ես, բեզարած ես,
Առը շուտ տա՛ր, շու՛տ արի.
Ծովի պես բռնած ես,
Եկեր ուրնկի՛, տուն արի՛...

(1893)

Ժողովրդական անաղարտ սիրո բյուրեղյա պատկեր է բանաստեղծությունը՝ ստեղծված զգացմունքի ահռելի ուժը նրբերանգներով արձանագրելու, միջավայրին նկարչական գրավչություն հաղորդելու կարողությամբ։

Սեծ քնարերգուն առաջին իսկ քայլերից հակում ուներ սերը վեհացնելու և սրբագործելու բնության երևույթների, ձևերի, գույների ու շարժումների իր գեղանկարչական սուր տեսողությամբ։ Իսահակյանը, ասես, սիրում է բնության հետ միասին. մեկ առնում է իր մեջ նրա ուժը, մեկ քնքշությունը, ցասկոտ բռնկումներն ու կախարդող մեղմությունը, բազմազան, հարուստ գույներն ու հրազային փոխակերպությունները, հորդ գեղումներն ու գաղտնի հեքերը։

Բանաստեղծը սիրո առարկան չի զարդարում բնության պատկերներով, համեմատություններով կամ մակդիրներով, պարզապես նա սերը ապրում ու վերապրում է, կարծես, հենց իրեն բնության հնարավորություններով.

Կուզե՞ս լինիմ վշտի ցողեր՝
Աչքերիդ մեջ շող ցայեմ.
Լուռ գիշերվա անուշ հովեր՝
Փունջ ծաղեդ փայփայեմ...

Կուզե՞ս լինիմ ծառ ու ծաղիկ՝
Քեզ զրկումս նինջ սփռեմ.
Թալուկ ստվեր, լռվիչ բոշնիկ,
Օրոր ասեմ, օրորեմ։

Ինչ որ ցանկաս՝ կուզե՞ս լինիմ,
Լինիմ երկինք ու երկիր,
Լինիմ ծո՛վ, ժայռ, արև, լուսին,
Միա՛յն, միա՛յն ինձ սիրի՛ր...

(1892)

Ճիշտ այս եղանակով էլ, եթե մերժվածությամբ ու ցավով ամպամած է ու արտասվում է իր հոգին, ապա դա իմաստավորվում է բնության երևույթների հավաքական արձագանքով ու ձայնակցությամբ.

Դա՛ղրս լացեք, սարի սըմբուլ,
Այվան-այվան ծաղիկներ.
Դա՛ղրս լացեք, բաղի բլբուլ,
Ամայող երկնուց զով-հովեր...

(1893)

Իրոք սահման չունեն իսահակյանական սիրո ծավալումները, ծալքերն ու երանգները։ Միմյանց մեջ ալիքավորվում են աշխարհի վայելչությունն ու տառապանքը, վիշտն ու խնդությունը, խենթ պոռթկումներն ու նրբին զեղումները։

Իր խոհերի և զգացմունքների տարողությամբ նա երևույթները պատկերում էր հակասություններով, խռովքով ու ներդաշնակություններով լեցուն մարդկային հարաբերությունների ընդհանուր ոլորտում, որը և պայմանավորեց նրա պոեզիայի յուրահատուկ համակարգը։ Մի համակարգ, որտեղ սերտորեն ներթափանցված են խոր ողբերգականությունն ու կյանքի պաշտամունքը։

«Օրգեր ու վերքերում», լինի դա կորովի, եռանդի ալիքավորում, թե տխրություն ու դառնություն— միևնույն է՝ հոգեկան ամեն մի պահ ներկայանում է խոհերի, զգացմունքների հարուստ անցումներով հղի հյուսվածքներում։

Ահա, օրինակ, մի բանաստեղծություն այդ ժողովածուից՝ «Մութը գըրկած գետ ու գետին» (1895)։ Բանաստեղծն այստեղ, ասես, ամեն ինչ փոխադրում է բնության և մարդու ներքին հաղորդակցության խորհրդարաննե-

ը, որտեղ նրանք «գաղտնի» միմյանց վարակում են նորանոր տրամադրություններով։ Սկզբում նա ձայնակցում է մթնշաղի «անուշ ու տխուր» շնչառության ու զարկերակի համաչափությանը.

Մութը զրկած գետ ու գետին
Հով ու ալիք կը շնչեն.
Երկինքն զրկած աստղ ու լուսին,
Արտերն անգորոր կը ննջեն։

Սիրտս, սիրտս թույլ կզարկե...

Այստեղից սկսվում է աննշմարելի հակադարձ ընթացք. այժմ էլ բանաստեղծի հույզն է իրենը թելադրում բնությանը, բերելով բնության երևույթների այլևայլ նորաձևումներ։

Եվ այսպես շարունակ նրա բանաստեղծություններում ներքին դրամատիզմով լեցուն փոխակերպվում են տրամադրությունները։

Իսահակյանին գրաղեցնում է ոչ թե կոնկրետ հույզը, ապրումը կամ մորմորը։ Նրան գրավում է բոլորովին այլ բան՝ ապրումի ընթացքը։ Նա արհեստականորեն չի «մեղմում», չի «հանդարտացնում» բնությունը՝ գտնելու համար իր հոգու հանգրվանը։ Բնության պատկերներում ելք է գտնում բանաստեղծի խռովքը։

Բանաստեղծական այս մեկնակետով «Երգեր ու վերքերում» խտանում են ցրտի, բքի, խավարի, ձյան ծանր շերտերի, հետապնդող օձի, անգութ գայլերի պատկերները։

Մերթ սիմվոլիկ պատկերներով ու այլաբանորեն, մերթ ռեալիստական անմիջական վերարտադրությամբ Իսահակյանը զարմանալի ուժով անդրադարձնում է ժամանակի «եղանակը».

Ցուրտ է, օրդ—բո՛ւք ու խավա՛ր,
Քամին շաչում, շառաչում...

Վաղ շրջանի բանաստեղծություններից է սա՝ գրված 1892-ին։ Այնուհետև «զորանում» են արհավիրքի պատկերները, սաստկանում են «որոտն ու աղմուկը», «սառչում է օրը», «երկիրը սառած ճաքում-ճաքճքում», քամին սուրում է անդունդներից, դժնդակ ոռնոցով վայում ու արշավում «սար ու դարեր»։

Բանաստեղծը մխրճվում է աշխարհի ռեալ իրավիճակի մեջ՝ որոշելու սեփական քաղաքացիական նկարագիրն ու տեղը.

Թող անձիր ծովը նոա, փրփրի,
Թխպոտ երկինքը կայծակներ շա՛ղ տա,
Եվ որոտ փարոսը մշուշում թաղվի,
Փրկարար ափը աչքիս չերևա՝
Ջեմ հուսահատվի՛...

(1893)

Երբեմն հոգին մաշում են կասկածները, ապագան ներկայանում է սառած, ճարճրված ու պատառոտված, սակայն բանաստեղծը մշտապես նորանոր ուժեր է առնում հարազատ ժողովրդի տարերքից, նրա անընկճելի կենսասիրությունից։

1894 թ. գրած «Կենսական ծովի հույզերի միջին» բանաստեղծության մեջ պոռթկում է չհամակերպվող ոգին, ծառացող ու ազատատենչ կենսասիրությունը։ Հողմ ու փոթորիկ է շուրջը հածում, գոռ ալիքներն են կործքը ծեծում, բայց նա իրեն զգում է ժայռի պես ամուր՝ «Ես ժայռի նման կանգնած եմ ամուր»։

Իսահակյան արվեստագետը ժողովրդի կենսահաստատ ոգին չի իզում ու անջատում նրա աշխարհատեսության ամբողջական համակարգից։ Մաքառման ու պայքարի դարավոր ավանդներ կուտակած հայ ժողովուրդը XIX դարի վերջին և XX դարի սկզբներին կանգնած էր ծանր փորձությունների առջև և դարձյալ անվարան ու տոկուն ստեղծում էր ու ստեղծագործում։

Սակայն շատ պատրանքային կլիներ նրա հայացքը իրականության հանդեպ, եթե պատմական այդ դժվարին ժամանակներում բանաստեղծը չունենար սպառնալիքի զգաստ գիտակցություն։ Ժողովուրդը չի ընկճվել, բայց և ապրել է խոր անհանգստություն, մոտալուտ վտանգի տեսական տագնապ, նույնը և Իսահակյանը։

Իր ժողովրդի հարազատ զավակ Ավետիք Իսահակյանը ժողովրդի հետ վերապրեց այս բարդ՝ կորովով ու խռովքով լի ողբերգական ծանր կացությունը։ Բանաստեղծի ապրումների հակասականությունը՝ հորդացող կենսասիրությունն ու դառնությունների թանձրացումները, հասկանալու համար պետք է լայն շառավիղով նայել ժողովրդի ռեալ կացությանը երկու դարերի սահմանագծում։

Իսահակյանի ներհակ տրամադրությունները երբեք չեն հանգեցնում նրան անհույս փլուզումների. ընդհակառակը, մշտապես հավասարակշռվում են առավել հզոր տրամադրությամբ՝ աշխարհի պաշտամունքով։ Ողբերգականությունը, ինչպես խորաթափանցորեն բացատրում է Դ. Դեմիրճյանը, «բանաստեղծի հոգում կատարեց մեծ ավերումներ, թունավորեց նրա կյանքը, սակայն հենց միևնույն տրագիզմը բարձրացրեց նրա թռիչքը, լայնացրեց նրա դիապազոնը, խորացրեց նրա սերը դեպի կյանքի հաստատումը»[3]։

Երկրային ցավերից ելք գտնելու համար Իսահակյանի որոնող ոգին մղվում էր դեպի «կախարդ հեռուները», սակայն կասկածները ոչ մի վայրկյան չէին փարատվում, և նա նորից ու նորից սուզվում էր կյանքի ներքին շերտերը։

Վիթխարի է Իսահակյանի խոհերի ու ապրումների կորագիծը, կարծես հոգում կուտակված են մեծ ծնունդով հղի դարաշրջանի ցավերը, հույսերն ու հուսախաբությունները.

Մայրիկ. նիվանդ եմ. սիրտս բրբված,
Տես, ո՞րքան խոռն են հոգուս վերքերը
Արնոտ ու խոցոտ։
Մի՞թե կարող ես վերքերս բուժել.
Որ տիեզերքի հրսկա վերքերի
Կարիքներից են...

... Մայրիկ. իմ մայրի՛կ.
Ո՞ղ ես թափառեմ երկրի ոլորտում,
Ամբոխի վրա, ուրվականի պես.
Ճակատս՝ կրնկիոներ,
Ձանձրույթը՝ շրթունս...

«Մենակ ու մռայլ թափառեմ խոժոռ»,— գրում էր նա 1895-ին և սա, իրոք, նրա այդ տարիների հոգեկան վիճակի անդրադարձումն է։

3 Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատ. 8, Երևան, 1963, էջ 285։

Իսահակյանը ձգտում էր հեռուները հավասարապես երկու մղումով. մի կողմից՝ աշխարհի չարիքների եզրերը գտնելու կրքով, մյուսից՝ կյանքի անհագ ծարավն ու սերն էր մղում նրան դեպի նորանոր հեռուները։ Եվ սեփական ստեղծագործական այս խառնվածքի սպառիչ ինքնանկարը դարձյալ ներկայացրել է ինքը Իսահակյանը «Փշե-պսակը ճակտիս կըդնեմ» (1895) հայտնի բանաստեղծությամբ.

Փշե-պսակը ճակտիս կրդնեմ
Ու ջինջ սրտով ամբոխի մեջ,
Ու վեհ մտքերով նրա վրեն
Կրքավառեմ ոլո՜ր-մոլո՜ր
Երկրի բոլոր ոլորտներում...

— Եվ ի՞նչն է իմ նպատակը.—
Աստղոտ. վսեմ ապագան.
Որ վառ. պայծառ կրշողա
Պղտոր կյանքի ափերից
Խորին. կապույտ ճեռվում...

Սա ժողովրդական աշխարհատեսության բանաստեղծորեն միջնորդված անդրադարձում է, որ միաժամանակ նշանակում է, թե բանաստեղծը մինչև վերջ դինվորագրվում էր մարդկության պատմության վսեմ գալիքին, նրա բարձր ճշմարտություններին և գաղափարներին։

Եվ այսպես, վաղ շրջանից՝ «Երգեր ու վերքերից» սկսած «անձնական» ու հասարակական-քաղաքացիական բազմակողմանի ուղիներով, բազմալար մոտիվներով է թևակոխում իր ստեղծագործական ճանապարհը Ավ. Իսահակյանը, «անձնական» հուզապրումից անբաժանելի շոշափելով հարազատ ժողովրդի ցավերն ու ճակատագիրը, համայն մարդկության կենսական խնդիրներն ու ձգտումները։

Բանաստեղծը արտացոլեց հայ ժողովրդի ճակատագիրը նրա պատմության ամենաճգնաժամային շրջաններից մեկում։ Նրա ստեղծագործության մեջ արտահայտություն են գտել և՛ ժողովրդի հոգեկան ուժերի անկման պահերը, տարակուսանքները, և՛ ժողովրդի ներքին կորովը, վերածնության հավատը, ողբերգական կացությունը և պատմական կենսունակությունը։

Իսահակյանը տեսավ և հարազատ ժողովրդի հետ ճաշակեց պատմության դաժան հարվածները, անամոթ ցավից նրա հոգին մռայլվեց և պոռթկաց անենքով։

Բանաստեղծը հաճախ է զրույց բացել հայրենի երկրի ճակատագրի խորհրդանիշ դարձած՝ անցյալի ու ներկայի դառնությունները «ճակտին դիզած» Ալագյազի հետ.

Սև-մութ ամպեր ճակտիդ դիզվան,
Դուման հազար, Ալագյա՛զ,
Սրտումս արև էլ չի ծաղկում,
Սիրտս է՛լ դուման, Ալագյա՛զ։

Զուտ փեշերդ անցա. տեսա.
Առանց դարդի սիրտ չը կար.
Ա՛խ. իմանաս. ցա՛ն Ալագյազ.
Իմ դարդիս պես դարդ չկար...

(1898)

Իսահակյանը իր անկեղծ զգացմունքները, տառապանքով ապրածն ու զգացածը երբեք չթաքցրեց աշխարհից։ Լիաձայն, առանց պահ իսկ կեղծելու, նա խոսեց պատմական չարագուշակ քառուղիներում հարազատ ժողովրդի կրած աղետներից։ Եվ իր՝ բանաստեղծի դիմագծերում անդամ կարելի էր կարդալ նրա տարիներով ապրած ու վերապրած խռովքը։ Ասես մտատանջությունից ծանրացած, բանաստեղծի կիսափակ կոպերի տակից նայող աչքերում դրոշմվել էր ժողովրդի դարավոր տառապանքի խորհուրդը։

Իսահակյանի հոգու ալեկոծությունների ակունքը անկոտրում կենսասիրությունն է, կյանքի հանդեպ անսահման սերը, որ անընդհատ բորբոքում էր անհաշտությամբ հասարակական չարիքի դեմ՝ կենսական զարթոնքի անհուն կարոտն է նրան լիցքավորել կենաց-մահու գոտեմարտում։

Բանաստեղծը նզովել է՝ սիրուց, չարացել է՝ տենչալով բարին, հուսախաբվել է՝ հավատարիմ դավանած բարձր գաղափարներին, մենակություն է զգացել՝ ունենալով մարդասիրության կուռք։

1900-ական թթ. գրական քննադատությունը Իսահակյանի «մեղքն» համարել է այն, որ «կյանքի քաղցրությունը որոնող» և միաժամանակ «մարդկության ցավերով այրվող» բանաստեղծը գտնվում է «անհարիր իրողություններին» ոլորտում։ Քննադատին անհամատեղելի են թվացել այդ հակառակ բևեռների փոխադարձ հագեցումները, մի տրամադրության պայմանավորվածությունը մյուսով։ Իրականում հենց դրանով էլ որոշվում է Իսահակյանի բանաստեղծական տարերքի դրամատիկ էությունը։

Մեծ կենսասիրությունն է մշտապես սրել աշխարհի չարիքների իսահակյանական զգացողությունը և հակառակը։

Իսահակյանի հոգում կային Նարեկացու արտահայտությամբ՝ «Հակառակադործ երկու հալոցներ», որոնց ալավն ու բռնկումները մշտապես փոխանցվում էին միմյանց։ Այստեղից նրա պոեզիայի ջղուտ նյարդայնությունն ու «քարևքար զարկվելու» մոլեգնությունը, որը որոշ հիմք է տվել քննադատներին նմանեցնելու նրան Հայնեին։ Իզուր չէ, որ Վերնատանը Իսահակյանին կատակելով անվանում էին Հայնե։ Այս հարազատությունը՝ հենց նույն այդ նյարդայնության առումով, հաստատելու է գալիս այն մեկնակետը, որով դեռևս 1895-ին բանաստեղծը հասկանում ու մեկնաբանում էր Հայնեին. «...Հայնեն միշտ երևում էր մեր գրականության մեջ նուրբ, սալոնական-մանուշակի ու շողերի բույրիչ։ այժմ նա երևում է ներվող էպիկուրիստ, հոգնած, զզված բուդդիստ։ Նրա այս գլխավոր կողմը միշտ մոռացվում էր...»[5]։

Աշխարհի ու կյանքի մեծ սիրահար Իսահակյանը, բնության հրաշքների ու հեքիաթների երկրպագու քնարերգուն վերպատմական միրաժներ չէր ստեղծում. նա պաշտում և միաժամանակ նզովում էր կյանքը։ Դա հասարակական-քաղաքական որոշակի դավանանք ունեցող մարդու սեր էր կյանքի հանդեպ և հենց դրա համար էլ ուներ խռովքի ու զայրույթի հուժկու լիցք։ Ներհակ խոհերն ու կրքերը սերում էին անդորր ու լճացում չհանդուրժող, մարդկային կատարյալ հասարակության համար մաքառող հումանիստ գրողի աշխարհատեսությունից։

Ինչպես «Երգեր ու վերքերում» ամփոփված երգերով, այնպես էլ ժամանակի պարբերականներում տպագրված մյուս բանաստեղծություններով Իսահակյանը ներկայացավ իր խոհերի և զգացումների «ծրագրային» հայտագրերով։

Եվ հետագայում զարգացող նրա բարդ տրամադրությունների նախահընչյունները կարելի է որսալ Իսահակյանի պոեզիայի այս նախերգում։ Այս իմաստով նրա ողջ ստեղծագործության համար, իրոք, բնաբան կարող են ծառայել դեռևս 1893 թ. գրված հետևյալ տողերը.

---

4 Տե՛ս «Մուրճ», 1904, № 3։

5 ԳԱԹ. Ավ. Իսահակյանի ֆոնդ, № 79։

Տիեզերքի պերճ ճյուսվածքն եմ,
Իմ մեջ երկինքն է, երգում.
Ոնկում է սիրո հրդեհն,
Վշտի հեռեղն աղմկում...

Նախասովետական տարիների գրական քննադատությունը քաղաքական սրված պայքարի մթնոլորտում կանխակալ գնահատականներով նեղացնում էր բանաստեղծի ստեղծագործության բովանդակությունն ու արժեքը: «Երգեր ու վերքերը» լույս տեսնելուց հետո ձևավորվում են մտայնություններ, որոնք ինչ-որ չափով ձեռք են բերում սովորության ուժ: «Սիրերգությունն է Իսահակյանի բանաստեղծության միակ լարը». նրա բանաստեղծությունը «մռայլ, անհույս, անմխիթար ողբ է». «վարպետ է զգացմունքի հատ-հատ վայրկյանները երգելու», նրա հոգին ոմնի երկու հակադիր շրջման կետ՝ «մեկը ժողովրդի մեջ, մյուսը վերացականության սառույցներում» և այլն:

Նման գնահատականները երկար ժամանակ արգելակում էին ամբողջության մեջ տեսնելու բանաստեղծի ստեղծագործությունը: Նրա պոեզիայի բարդ, հակասություններով հանդերձ ներքին կուռ կապակցություններ ունեցող դաղափարական-գեղարվեստական բովանդակությունը մասնատվում էր տրամադրությունների առանձին արտահայտությունների: Դրա հետևանքով ձևավորվում է մի տեսակետ, ըստ որի Իսահակյանը, իբր, ելնում է իրարից զատորոշված ու տարբեր ակունքներից. «Նա լավ է ու լայն, քանի ժողովրդի հետ է երգում կամ ժողովրդի սրտից է խոսում... Երբ ձեռք է զարկում իր սրտի մյուս լարերին և հնչեցնում է իր երգը կամ վերքի մեղեդին, նրան համակրողների օղակը նեղանում է... և ընկնում ես ինչ-որ կախարդական անիծված հարցերի մթնոլորտի մեջ»[6]:

Հյուսվում է մի լեգենդ, ըստ որի, երբ Իսահակյանը երգում է Մանթաշն ու Արադածը, երբ նրա միտքը Բինգյոլի ճամփաների հետ է, կամ Արազի ջրերի, երբ նրան տանջում է մաճկալի հոգսը կամ Ջարոյի սերը, ապա այդ դեպքում ժողովրդինն է, նրա պատգամախոսը, իսկ երբ սուզվում է ժամանակի հակասությունների հորձանուտը, տառապում մարդկությանը միավորող սոցիալական չարիքների ու անարդարության ցավերով՝ օտարանում է իրեն, դառնում ուրիշ:

Իրականում բանաստեղծը «ժողովրդի սրտի» խորքերից էր հասնում մինչև «կախարդական անիծված հարցերի մթնոլորտը»: Նրա ստեղծագործության ժողովրդական, հասարակական մեծ հագեցումներն են կանգնեցնում նրան դարաշրջանի խնդիրների, մարդկության գոյության առեղծվածների առջև: Իսահակյանի պոեզիայի ժողովրդայնությունը չի բացառում, այլ ընդհակառակը՝ ենթադրում է մտածողության լայն մասշտաբներ, ենթադրում է ոչ թե ազգադրական, այլ համամարդկային մտածողության չափագծումներ: Ժողովրդականն ու «կախարդական անիծված հարցերը» սերտ աճող ոլորտներ են բանաստեղծի գեղարվեստական աշխարհատեսությամբ:

«Երգեր ու վերքերում» բանաստեղծի անհատականությունը հատկանշվում էր հարազատությամբ՝ ժողովրդի ոգուն ու հոգեբանությանը, առանձնանում էր ժամանակի լարված մթնոլորտի սուր ու խոր զգացողությամբ, բուռն ու անհանգիստ տարերքով:

---

6 «Մուրճ», 1898, № 6:

НАЧАЛО ТВОРЧЕСКОГО ПУТИ АВЕТИКА ИСААКЯНА

(К 100-летию со дня рождения)

Доктор филол. наук Г. Н. ОГАНЕСЯН

(Резюме)

Статья посвящена раннему периоду творчества великого армянского поэта Аветика Исаакяна.

Поэт вступил на литературное поприще в один из самых переломных и мучительных периодов истории армянского народа. В его творчестве 90-х годов нашли отражение сомнения, спады внутренних сил народа и его духовная сила, вера в свое возрождение, трагическая судьба и историческая жизнестойкость.

Первый сборник стихотворений Исаакяна — «Песни и раны», опубликованный в 1897 г., принес ему славу поэта с большим и самобытным художественным миром. Исаакян утверждал синтетическое поэтическое искусство, оперирующее соотношениями и скрещениями разнородных явлений, состояний и признаков. Взаимопроникновения многообразных, порой противоречивых настроений и эмоций вели к объемному охвату явлений действительности. Эмоциональная струя его стихотворений смешивается с философскими раздумьями, лирическая стихия поэта насыщается эпическим дыханием. Эти качественные признаки поэзии Исаакяна раскрываются в статье на примере анализа ряда стихотворений поэта.